


Շարանի Ալի անունով եօթը տարեկան զաւակին (1377-1382), որ « Մէլիք Մանսուր » կոչուեցաւ . իսկ խնամակալութիւնն իրարու ետեւէ յանձնուեցաւ Գարաշ, Էնէբէգ, Տաշտիմուր, Բէրէկէ եւ Բարկուկ զօրավարներուն : Այս խառնակութիւններէն գիացաւ օգտուիլ Լեւոն, այնպէս որ՝ մէկ կողմէ գէպի եւրոպական պետութիւններն ըրած դիմումներն եւ աղերսաւ



Լեւոն Ե.ի դրամները — Les monnaies de Léon V.

զրերը բազմապատկեց, իսկ միւս կողմէ պատանի սուլտանին խնամակալներէն մէկ-երկուքին սիրաբ շահելով՝ անոնց միջամտութիւնը խնդրեց :

Կը ցաւիմ, որ Լեւոնի գրած նամակներէն եւ ո՛չ մէկը կարելի եղաւ ձեռք բերել, որպէս զի հասկնայինք թէ ի՞նչ սրտամուկի տողերով նկարագրած է իր վիճակը . նոյնպէս կարելի չեղաւ ձեռք բերել եւրոպական պետութիւններէն իր ստացած մխիթարական նամակները, բացի մէկ հատէն՝